Հարգելի գործընկերներ,

Ինչպես գիտեք, ԳՀՀ-ՎԷ ծրագրի 4-րդ և 5-րդ փուլերում (Ծրագիր) առկա միջոցների ընդհանուր գումարը բավարար չէր մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային կայանների կառուցման առկա պահանջարկը բավարարելու համար, որի արդյունքում Ծրագրի շրջանակում ֆինանսավորվել է ընդամենը 23 ՖՎ նախագիծ:

Սույնով տեղեկացնում ենք, որ ներկայումս Ծրագրի ռևոլվերային ֆոնդը համալրվել է և լրացուցիչ միջոցներ են հասանելի դարձել մինչև 5 ՄՎտ հզորությամբ այն նախագծերի ֆինանսավորման համար, որոնց արտոնագրերը տրամադրվել են ՀԾԿՀ-ի կողմից 200 ՄՎտ արտոնագրերի տրամադրման վերջին փուլի շրջանակում (նախքան շուկայի ազատականացումը) և որոնք ունեն էներգիայի գնման 20 տարվա երաշխիք: Այս կապակցությամբ, տեղեկացնում ենք Ձեզ հետևյալ վերջնաժամկետների մասին.

1. Նոր հայտի ներկայացում նոր, կառուցվող կամ գործող արևային կայանների վերաֆինանսավորման նպատակով՝ **մինչև մայիսի 30, 2024թ.**:
2. Նոր հայտերի անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում ըստ ստուգաթերթի պահանջների՝ **մինչև հունիս 30, 2024թ.**:

Բոլոր հայտատուներին խնդրում ենք առաջնորդվել վերոնշյալ վերջնաժամկետներով: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ միայն վերոնշյալ վերջնաժամկետներին համապատասխան հայտերի ներկայացումը դեռևս չի երաշխավորում Ծրագրի շրջանակում վերաֆինանսավորումը, քանի որ վերաֆինանսավորման որոշումը կայացվում է հիմք ընդունելով ՖՎ նախագծերի համապատասխանությունը նվազագույն տեխնիկական պահանջներին, նախագծի գնահատման, բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգություն և այլ չափանիշներին: Բոլոր հայտերը դիտարկվելու են «առաջին դիմում-առաջին սպասարկվող» մոտեցման հիման վրա և գնահատվելու են Ֆիխթեր խորհրդատվական ընկերության կողմից՝ համաձայն Ծրագրի հիմնական պայմանների և պահանջների: Լրացուցիչ պայմաններ կարող են կիրառվել, եթե պահանջարկը գերազանցի հասանելի վարկային միջոցները:

Խնդրում ենք մինչև 5ՄՎտ հզորության ՖՎ նախագծերի վերաֆինանսավորման հնարավորության մասին տեղեկացնել համապատասխանաբար Ձեր հաճախորդներին:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝ ԳՀՀ ԾԿԳ